ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 1089-Ա «07» 07 2026 թ.

## ԱՐԹՈՒՐ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը, արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Ա. Պապոյանի զեկուցագիրը և ՀՀ արտաքին գործերի նախարարության 2026 թվականի հուլիսի 02-ի № 1104/34324-26 գրությունը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սպորտի քաղաքականության վարչության քաղաքականության մշակման և վերլուծությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ Արթուր Սեդրակյանին 2026 թվականի հուլիսի 27-31-ը ներառյալ գործուղել Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա՝ «Ապագայի խաղեր» նոր սերնդի միջազգային բազմասպորտային խաղերը ֆիջիթալ սպորտի ձևաչափով, ինչպես նաև Ֆիջիթալ սպորտի համաշխարհային գագաթնաժողովին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում Բաժնի պետ Արթուր Սեդրակյանի պարտականությունների կատարումը վերապահել Բաժնի գլխավոր մասնագետ Էլլադա Հարությունյանին:

3. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված գիշերակացի ծախսերը հոգում է հրավիրող կողմը, իսկ ավիատոմսի և օրապահիկի ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Արթուր Սեդրակյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գործուղման արդյունքների մասին հաշվետվություն:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

7/7/2026

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169